ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված պարզեցված ընթացակարգի արդյունքում 2016 թվականի հունիսի 21-ին կնքված N ՔՆ-ՊԸԾՁԲ-16/9 պայմանագրում 2018 թվականի փետրվարի 07-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ -	ՀՀ Կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն-	ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի շինարարական աշխատանքնե-րի որակի տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման N ՔՆ-ՊԸԾՁԲ-16/9 պայմանագրի կա-տարման համար հատկացված ֆինանսական միջոցի տրամադրում:
Փոփոխության հիմնավորում-	Պայմանագրի 4.1.1 և 7.3 կետերով նախատեսված պայմանները:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
21.06.2016թ. կնքված N ՔՆ-ՊԸԾՁԲ-16/9 գնման պայմանագրի

ք. Երևան 07.փետրվարի 2018թ.

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Արման-Թաման>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ.Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Ձոլաքար գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 2016 թվականի հունիսի 21-ին կնքված N ՔՆ-ՊԸԾՁԲ-16/9 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կատարողի կողմից Պայմանագրի N 1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2018 թվականի ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների գինը սահմանել 1 768 100 (մեկ միլիոն յոթ հարյուր վաթսունութ հազար հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012466 ՀՎՀՀ 02565827	<<Արման-Թաման>> ՍՊԸ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Գավառ մ/ճ Հ/Հ 11500844540100 ՀՎՀՀ 08417115
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան ---------- (ստորագրություն)	Մ.Մովսիսյան ---------- (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
2016 թվականի հունիսի 21-ի կնքված
ծառայությունների մատուցման
N ՔՆ-ՊԸԾՁԲ-16/9 գնման պայմանագրի
07. փետրվարի 2018 թ. կնքված N 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 02)

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն	-	-	-	176 800	176 800	176 800	1 060 900	1 060 900	1 060 900	1 768 100	1 768 100	1 768 100	1 768 100

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու

<<ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտեի
աշխատակազմ>> պետական
կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012466
ՀՎՀՀ 02565827

Կ ա տ ա ր ո ղ

<<Արման-Թաման>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Գավառ մ/ճ
Հ/Հ 11500844540100
ՀՎՀՀ 08417115

Աշխատակազմի ղեկավար՝

Ա. Մկրտչյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Տնօրեն՝

Մ.Մովսիսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.